

## ԹՈՅԼՏՐԵԼԻՔ Է ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԱ- ԿԱՆ ԳՐԱԲԵՐՈՒՄ<sup>1)</sup>

«Արարատի» տարույս փետր. համարում լույս տեսաւ մեր մի լողուածը «Վարդեաց լաւաքեալսն և լույս լարութեան» վերնագրով: Գեր. Յուսիկ եպիսկոպոսը մի քանի դիտողութիւններ էր արել նորա մասին նոյն մարտ-ապրիլ «Արարատի» համարի մէջ, որ կարելի է հետեւեալ կերպով ամփոփել.

ա) Անտեղի է եկեղեցական զրքերում սրբադրութիւններ անելը, «որովհետեւ հենց սկսեցինք սրբադրութիւնը, զարկերով սրբագործուած ցանգը կխախտուի, եկեղեցւոյ միութիւնը կքայքայուի, հերձուածներ առաջ կը դան. հետեանքը շատ դառն և ցաւալի կլինի»:

բ) «Սխալ է արդեօք ինչ որ եկեղեցում կատարուում է թէ ուղիղ՝ ալդ կարող է որոշել եկեղեցին» անհատն «խրատւոնք ու համարձակութիւն պէտք է չունենալ իւր կամեցած սրբադրութիւնները ըստ կամս անել»: Նա «պարտաւոր է ընդունել և խոստովանել այն՝ ինչ որ իւր եկեղեցու լրութիւնը ընդունում ու քարոզում է»:

Այսպիսով մեր դրած հարցը մի կողմ է մնում և լաւաջ են դալիս սկզբունքի խնդիրներ, որոնց նկատմամբ մեր հալեացքը պարզել և թիւրիմացութիւնները վերացնել անհրաժեշտ ենք համարում:

Յուսիկ սրբազանը նկատում է, որ «օրինակները շատ շատ են», թէ ինչպէս սրբադրութիւնների պատճառով հերձուածներ են լաւաջ եկել: Անշուշտ նա աչքի առաջ ունի օրթողոքս եկեղեցու անցեալը, որովհետեւ այդտեղ լատկա-

---

<sup>1)</sup> Հիւրընկալելով «Արարատի» խմբագիր բարձր. տ. Կ. Վ. — ի այս լողուածը՝ խմբագրութիւնը կարևոր դէպքում սիրով կը հրատարակէ երկու կողմի պարզաբանութիւնն ևս խնդրին վերաբերեալ: ԽՍԽ.

պէս պաշտամունքն աշնչափ մեծ նշանակութիւն և աշնպիսի հաստատ ձևակերպութիւն է ստացել, որ իւրաքանչիւր փոքրիկ փոփոխութիւնն անգամ ղեղծում է համարուում ուղղափառութեան դէմ: Եւ լիրաւի ալդտեղ փոքրիկ պատճառներէ մեծ հերձուածներ լառաջ եկել են. օր. ռուսաց պատրիարք Նիկոնը կամեցաւ եկեղեցական գրքերը սրբագրել դարերի ընթացքում սպրդած անթիւ սխալներէ, և թէպէտ սոսկական մի անհատ չէր նա, ալ իւր եկեղեցու գլուխը, և նորա կողմն էին իւր շրջապատող հոգևորականութեան հասկացող ու լաւագոյն ներկայացուցիչները, բայց կրկին հերձուած լառաջ եկաւ և աշնքան հեռու գնաց, որ ալսօր Ռուսաստանում միլիոնաւոր ժողովուրդ հերձուածող է համարուում, որովհետեւ հին սխալաշատ գրքերով է ժամերգութիւն կատարում և պահանջում է խաչակնքելիս մատներն ալպէս դարսել և ձէ աշնպէս: Ի՞նչ է հետեւում արդեօք դորանից. ան միթէ, որ Նիկոն պէտք է չսրբագրէր գրքերը. որպէս ղի հերձուած լառաջ չդար. պէտք է ուրեմն թոյլ տար, որ իւրաքանչիւր նոր տպագրութեան մէջ մի քանի տասնեակ և մի քանի հարիւր նոր սխալներ աւելանային, սոքա ևս ժամանակի ընթացքում սրբագործուէին, և վերջն աշնտեղ հասնէր, որ մարդիկ երկիւղածութեամբ կարդալին աղաւաղուած և անհասկանալի բառեր ու չհամարձակուէին սրբագրել, հասկանալի դարձնել. որովհետեւ փոքրիկ փոփոխութիւնն անգամ իբրեւ խորթութիւն և սրբապղծութիւն. կնկատուէր:

Չակերտների մէջ առնուած խօսքերը մերն են, որ Յուսիկ սրբագան մէջ է բերում իբրեւ հերքումն մեր լալտնած մտքի. սակայն ինչ են հերքում նոքա. միթէ ընդունելով, որ պաշտամունքը ասմէնից քիչ փոփոխուող տարրն է եկեղեցուց կարգաւորութեան մէջ», մենք կամեցել ենք ասել, թէ բոլորովին անփոփոխելի է, և իրօք սրբապղծութիւն է նրան ձեռք տալը. ինչպէս թուում է: Յաջորդ տողերում իսկ մենք չմենք ասում որ ալդ երևոյթը խաբուսիկ է, որ փոփոխութիւնը տեղի է ունենում անդադար՝ նկատելի ու աննկատելի կերպով: — Եւ մենք դորանից հետեցնում ենք ընդհակառակն, որ մեծ անտեղութիւն է պաշտամունքի կարծեցեալ անփոփոխականութիւնն իբրեւ ոկգբունք ընդունելն և ամեն սխալմունք ու օտարամոծութիւն նորանով նուիրագործելը: Ո՛ւր կերթալինք մենք ալդ-յիսի սկզբունքներով: Ժ. դարում Հալոց կաթողիկոս-

ներից մէկին ձգեցին հայրապետական աթոռից, որովհետեւ ի-  
կոհներ էր մտքերէ իւր եկեղեցւոյ մէջ. բաց ալսօր Հալոց եկե-  
ղեցի գրեթէ չի գտնուի, ուր ալդպիսի իկոհներ չլինին: Ներ-  
կալ Վեհափառ Հայրապետը Ռուսաստանում արած ճանապար-  
հորդութեան միջոցին անտանելի գտնելով զանազան իկոհ-  
ների և խաչվառների լաճախութիւնը մեր եկեղեցիներում  
հրամայել էր դուրս տանել. սակայն երկու տարի լետօլ մեզ  
ցոյց տուին բոլորն իրենց տեղերում,—որովհետեւ ժողովրդի  
աչքը մի անգամ սովորել էր: Այդպէս կսովորի նա հեշտու-  
թեամբ թեք խաչերին և ուրիշ նման բաների, և մի քանի  
տասնեակ տարիներ լետօլ, երբ Հալոց եկեղեցի մտնենք՝ հալ-  
կական ոչինչ չենք գտնի ալդտեղ. սակայն երևակայելով միշտ,  
թէ սուրբ է և լուսաւորչական ալն ամենը, ինչ որ մի անգամ  
մուտք է գործել և հաստատուել եկեղեցւոյ մէջ՝ ձեռքից կթող-  
նենք շուտաւ լուսաւորչի իսկական ժառանգութիւնը: Այդ  
ժառանգութիւնը մեր նախնիք նորանով են պինդ պահել, որ  
հետամուտ են եղել միշտ հին նախնական աւանդութիւնը  
գտնելու և նորանից չչեղուելու: Իրենց հոգեւոր սննդեան պա-  
շարը ժողովել են միայն հայկական հողի վերաջ աճած աւե-  
տարանի սերմերից, իսկ որոմն անխնայ կրակի են մատնել:  
Մենք ևս պարտաւոր ենք նորն կերպ վարուել: Անօգուտ և  
խիստ վտանգաւոր ինքնախաբէութիւն չլինէր, եթէ խոստո-  
ւանել չկամենալինք, որ Հալոց եկեղեցւոյ պատուական ան-  
գաստանի մէջ ժամանակի ընթացքում շատ ու շատ որոմ-  
ներ են ընկել, և պէտք է հետզհետէ մաքրել որոմները՝ ոչ  
թէ պահել խնամքով ու թողնել որ նորերն աւելանան:

Հերձուածներ լառաջ գալու իսկական սլաճառն երբէք  
ալն չի եղել, որ եկեղեցական կարգերը քննադատուել և  
սրբազրուել են: Ինչ աւելի խոշոր թիւրիմացութիւն, քան  
ենթադրել, թէ ճշմարտութեան աւետարանի Քարոզիչը, որ  
բացականչում էր. «Էս լոյս լաշխարհ եկի, զի ամենալն որ  
հաւատալ լիս, ի խաւարի մի մնացէ»,—կարող էր պահան-  
ջել, որ իւր եկեղեցւոյ գործերը խաւարի մէջ մնան՝ մի գու-  
ցէ նոցա լոյս աշխարհ ելնելովն ու պարզուելովը եկեղեցւոյ  
խաղաղութիւնը վրդովուի ու վտանգուի: Եւ ո՞վ է ասում, թէ  
ալդ տեսակ խաղաղութիւն ցանկալի է եկեղեցու համար.  
անշուշտ ոչ նորա հիմնադիրն ու աշխարհի Փրկիչը, որ ազդա-  
րարում է ընդհակառակն. «Մի համարիք, եթէ եկի արկանել

խաղաղութիւն լերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, ալ սուրճ. Գրիստոսի եկեղեցին զինուորեալ եկեղեցի է, իւրաքանչիւր թիզ գետին աշխարհի մէջ տաք ու արիւնալի կռուով է նուաճել. խաւարի դէմ մաքառելն ու ճշմարտութեան երեսից մթութեան քող վերցնելը նորա կեանքի խնդիրն է, և ամէն կեանք կղաղարի նորա մէջ, եթէ ալ մաքառումը զաղարիւ վտանգը նորա համար ոչ թէ կռիւն է, ալ թմրութիւնն ու անտարբերութիւնը. և չալ. նահատակ եկեղեցին, որ ալնպիսի հսկայական կռիւ է մղել, ալնչափ շատ արիւն թափել իւր սրբութիւնները պաշտպանելու համար՝ ալժամ վտանգի մէջ է միայն մեր թմրութեան ու անտարբերութեան երեսից. — Յաճախ պարծենում ենք, թէ մեր մէջ հերձուածներ չկան, թէ բողոքականութիւն ու կաթոլիկութիւն ընդունած հայերն ևս մալրենի եկեղեցւոյ ծոցն են վերադառնում. բայց եթէ ուղիղ նախնիք՝ պարծենալու պատճառ չկալ, Հերձուածներ լաւալ չեն գալիս ու բողոքականացած հայերը վերադառնում են—միթէ նորա համար, որ շատ հաւատարիմ ենք մեր եկեղեցուն, համոզուած ենք նորա լատուկ դաւանական սկզբունքների ճշմարտութեանը, խոր ըմբռնում ենք նորա ինքնուրոյն մեծութիւնը՝ ոգևորում նորա փառաւոր անցեալով. ամենևին. ալ որ մեզ ոչ մի կրօնական ճշմարտութիւն չի հետաքրքրում, զանազան Եկեղեցիների մէջ եղած դաւանական խտրութիւնները անտարբեր են մեզ համար՝ մեր հոգևոր կեանքի կենտրոն և բովանդակութիւն քրիստոնէութիւնը չէ կազմում, ալ բոլորովին ուրիշ բան, ուստի և աւելորդ գլխացաւանք ենք համարում ալ խնդիրների մասին խօսելն ու վիճելը, մնում ենք ակնաեղ, ուր աւելի ձեռնառու է մեզ և հաճելի՝ արտաքին կողմնակի պատճառներով:

Դատ սովորական է մեր մէջ ալն անբովանդակ դարձուածք թէ՛ հաւատալ պէտք է՝ պէտք չէ քննել. իբրև թէ կարելի է հաւատալ, առանց համոզուելու, և համոզուել կարելի է չալտենական ճշմարտութիւնների, առանց քննելու՝ առանց երկարատե ծանր հոգեկան կռիւ մղելու: Մենք չենք պատկառում Առաքեալի ալն ահաւոր խօսքից, թէ «Ամենայն ինչ որ ոչ ի հաւատոց է՝ մեղք են», ու ինքներս ամենևին հաւատ չունենալով՝ ոչ մի նշանակութիւն չտալով կրօնական սկզբունքներին ու գիտելիքներին, մեծ իմաստութիւն ենք համարում և հաւատարմութիւն դէպի ազգալին եկեղեցին՝ ուրիշ-

ների առաջ իբրև հաւատացող ձեանալ և պահանջել, որ աղբորը նշանակութիւն ունենալ—որպէս զի հասարակ ժողովուրդը չգալթակողուի։ Եւ ահա ամենամեծ գալթակողութիւնն ենք պատճառում և ամենածանր անարգանք հասցնում Քրիստոսի եկեղեցուն՝ աջնպէս ներկայացնելով, իբր նորա ճշմարտութիւնները ալնքան ժամանակ միայն հաստատուն կմնան, քանի մեր սուտն ու կեղծիքը նոցա նեցուկ կլինին։ Քրիստոս ինքը դատապարտելով դատապարտում և արհամարհելով արհամարհում է մեր աղբ անմիտ ու ամբարկշտ նախանձախնդրութիւնը, լաւիտենական կեանքի ճշմարիտ ճանապարհը քանալու համար նորա հաստատած եկեղեցին գոյութեան իրաւունք չէր ունենալ, եթէ այսպիսի ողորմելի միջոցներով մի ժամանակաւոր գոյութիւն պահպանելու ձգտէր, և ստիպուած լինէր իւր ներքինը թաղցնելու քննող աչքերից։ Բայց բարեբաղասքար թաղցնելու ոչլինչ չունի, և հերձուած ու պառակտումներ նորա գրկում լառաջ չէին գալ, եթէ մարդիկ հետամուտ լինէին միայն նորա քարոզած ճշմարտութիւններն ըմբռնելու։ և իրենց ընթացքն ըստ ալնմ ուղղելու, ոչ թէ իրենց սեփական մոլորութիւններն ու մոլի ցանկութիւնները նորա անուան տակ թաղցնելով՝ պահանջելու, որ ամէնքն ընդունեն ալն իբրև դաւանական ճշմարտութիւն կամ իբրև եկեղեցուց անհրաժեշտ կարգ։— Եթէ պատրիարք Նիկոնի խեղացի և իրաւացի կարգադրութեան դէմ ապստամբողներ եղան՝ պատճառն անշուշտ դարերի ընթացքում զանազան ներելի և աններելի միջոցներով ժողովրդի մէջ հաստատուած ալն մոլար հալեացքն էր միայն, թէ մի բառի այսպէս կամ ալնպէս արտասանելը, մատների այսպէս կամ ալնպէս դասաւորելը նոյնչափ կարեւոր է հոգու փրկութեան համար, որչափ Քրիստոսի անուն դաւանելն ու աւետարանի սկզբունքների համաձայն կեանք վարելը։ Ահա այսպիսի մթութիւններ պէտք է պարզուին, որպէս զի իրենց տիւրը հեռեանքներն ևս վերանան. հալառակ ճանապարհով ոչ մի նպատակի չենք հասնի։ Քննող միտքը մի անգամ դարձնելուց լետող՝ ոչ մի հեղինակութիւն, ոչ մի կանոն, ոչ մի սպառնալիք նրան ալլ ևս չի հանգստացնի. պէտք է կամ համաձայնել նորա հետ կամ սխալը ցոյց տալ. և եթէ ամէն խնդիրներում այսպէս՝ ևս առաւել քրիստոնէական հաւատով և կարգերի վերաբերեալ խնդիրներում, եթէ ճշմար-

տութիւնն ամէն տեղ—ասպա ևս առաւել ճշմարտութիւն աւետարանի շուրջը:

Սակայն հարկաւ, երբ խնդիրը կրօնի մասին է, հարց կարող է լինել, թէ ում իրաւունքն է ճշմարտութիւն ցոյց տալը: Այս հարցին է վերաբերում Յուսիկ սրբազանի երկրորդ առարկութիւնը, որին և կանցնենք այժմ—կրօնական ճշմարտութիւնները մաթեմատիքական կամ բնազդիտական ճշմարտութիւններին պէս չեն, որ իւրաքանչիւր անհատական միտք իւր բնական դատողութեամբ քննել ու պարզել կարողանար. նոքա բղխում են աստղածալին լալտնութեան աղբիւրից. իսկ լալտնութիւնը կապուած է եկեղեցւոյ պատմական անցեալի հետ. քրիստոնէական եկեղեցին իւր ամբողջական կազմով ժառանգն է ալի լալտնութեան և կենդանի պահողը Աստուածալին Հոգւոյ ալն ներշնչումներին, որոնց միջոցով լալտնեալ ճշմարտութիւններին տառը նոր ի նորով կենդանանում և պարզուում է՝ քրիստոնեայ անհատների համար ըմբռնելի ու հոգևոր կենդանութեան միջոց դառնում: Ուստի և անհատը կախումն ունի ալստեղ եկեղեցւոյ ամբողջութիւնից. իրրե մի մանուկ դաստիարակուում է նա եկեղեցւոյ գրկում, սնուում եկեղեցւոյ հոգւով, և ալն խընդիրներում, որոնց իւր ըմբռնումը չի հասնում՝ ենթարկում է եկեղեցւոյ հեղինակութեանը, հաւատացած լինելով, որ Քրիստոսի եկեղեցին է լալտնեանական ճշմարտութիւններին միակ ներկայացուցիչն ու ուսուցիչը, և վստահելով նորան իբրե մի գթող ծնողի, որ իրեն չի խաբի, սխալ ճանապարհով չի տանի: Սակայն Յուսիկ սրբազան, ռւրիշ շատ շատերի նման, երկու բան չիթում է: Նախ մեծ սխալ է զուտ կրօնական ճշմարտութիւն համարել և եկեղեցական հեղինակութեամբ միալն որոշել կամենալ ալն ամէնը, ինչ որ իրական կամ պատահական առընչութիւն ունի կրօնի և եկեղեցւոյ հետ. երկրորդ՝ նոյն իսկ զուտ կրօնական ճշմարտութիւնների համար շատ երկմիտ ու վտանգաւոր դարձուած է ասելը. «Անհատը պարտաւոր է ընդունել և խոստովանել ալն, ինչ որ իւր եկեղեցւոյ լրութիւնն ընդունում ու քարոզում է»:

Մենք աշխատել ենք ցոյց տալ, թէ Հանգանակի մէջ պէտք է կարդացուի «քարոզեաց լառաքեալս» և ոչ «քարոզեաց» զառաքեալն». պատարագի միջոցին պէտք է ասուի սլոյս լարութեան» և ոչ սլոյս լարութիւն», հիմնուելով ալն փաստի վերալ, որ հանգանակն ու պատարագամատուցը կազ-

մողներն արդէս են գրել, և արդէս գրուել ու կարդացուել է մեր եկեղեցւոյ մէջ մինչև ԺԲ—ԺՆ դար: Մեր հալեացքով զուտ գիտական մի հարց է ար. որոշելու համար թէ այս ինչ քանը Ե. կամ Ժ. դարում ինչպէս է եղել՝ ո՞չ մի հեղինակութիւն, ո՞չ մի ներշնչութիւն հարկաւոր չէ, ալ պէտք է խնդիրը պատմականօրէն ուսումնասիրել ու գրական փաստեր բերել: Մենք արդէս էլ արել ենք. եթէ մեր բերած փաստերը բաւականութիւն չեն տալիս՝ կարող ենք նորերը բերել. կարող ենք մի քանի տասնեակ ձեռագիրներ մէջ տեղ դնել և կարգով ցոյց տալ, թէ ինչպէս հնագոյնի մէջ գրուած է «լառաքեալսն», լետոյ խելօքի մէկն ուրիշ ձեռագրի մէջ արդ «լ»-ի վերայ ուղղակի աղ է դժոււմ, մի երրորդը արտագրում է արդէն «ղառաքեալսն», լետոյ վերջին «սա»-ն ընկնում է. ինչպէս հնագոյն ձեռագրի մէջ գրուած է «լուս լարութեան». մի ուրիշ ձեռագրում «լարութեան» պատիւով է և վերջին տառը լաւ չի կարդացուում՝ «ե» է թէ «ի». լետոյ մի երրորդը արտագրում է «լարութի», և այսպէս մի քանի ձեռագիրներում «լուս լարութիւն» գրած են՝ կողք կողքի, լետոյ արդ երկու բառի մէջ ստորակէտ են դնում ալին.— Բալց Յուսիկ սրբազան այս ամէնն անուանում է «ըստ կամս քննադատութիւն», — կամալական ուրեմն, և ինչո՞ւ. նորա համար, որ անհատը ոչինչ քննելու իրաւունք չունի, եկեղեցին միայն կարող է սխալն ու ուղիղը որոշել. բալց ինչ ենք հասկանում «եկեղեցի» ասելով. ճշմարիտ է, որ մեր եկեղեցին որոշել է կարդալ՝ «քարոզեաց զառաքեալն և իւր վարդապետութեանը համապատասխան գտնելով արդ ձեռ նուիրագործել է». Երբ արդեօք, որ ժողովով, որ հայրապետական կոնդակով. — Մեր ասածներին պարզ պէտք է լինի վերջապէս, որ «քարոզեաց զառաքեալն» ընդունել են իրօք մի խումբ տղէտ գրչակներ՝ ընդունել են այն ժամանակ, երբ եկեղեցին տառապում էր լանկթէմուրների լծի տակ և նորա ամէնից գիտուն ներկայացուցիչները արդ գրչակներն էին, որոնք կարող էին միայն մի ձեռագրին միան արտագրել. ապա երբ եկեղեցին դարաւոր տառապանքից փոքր ի շատէ աչքը բաց է արել, կարդացել է սխալ արտագրութիւնները և աշխատել մի հերպ միտք գտնել նոցա մէջ: Եւ ինչ. ս. Սահակ, ս. Յովհան Օձնեցի, ս. Ներսէս Շնորհալի, որոնք «քարոզեաց լառաքեալսն» էին կարդում եկեղեցին չեն, ու այս միջնադարեան գրչակներն են եկեղեցի:

Եթէ հարկաւոր լինէր, մենք կարող էինք նաև ապացոյցներ բերել, որ դեռ մինչև վերջին ժամանակները «քարոզեաց լառաքեալսն» գրողներ ու կարդացողներ եղել են որ միայն հանգուցեալ Ներսէս Պատրիարքը չէր «յոյս լարութեան» կարդում, այլ սորանից դեռ 30—40 տարի առաջ ալղպէս կարդում էին տաճկահայոց շատ եկեղեցիներում՝ հին հոգևորականներ, որոնք անշուշտ բերնէ բերան սովորել էին ալղպէս իրենց հայրերից: Բայց միթէ կարիք կալ. միթէ մեր սկզբունքն է՝ իբրև եկեղեցւոյ դաւանութիւն և կարգ ընդունել այն միայն, ինչ որ եկեղեցական իշխանութեան թողտուութեամբ լուս տեսած գրքերի վերջին տպագրութեան մէջ կալ: Ուրեմն մենք Հայ. եկեղեցւոյ դաւանութիւնն էլ պէտք է սովորենք ոչ թէ Պարթևների, Թարգմանիչների, Օմնեցու, Շնորհալու գրուածները, այլ մեր ժամանակի քրիստոնէականներից, որոնք սովորեցնում են թէ Հայոց եկեղեցին երկու բնութիւն է՝ դաւանում, որոնց հեղինակները երբեմն չգիտեն նոյն իսկ՝ 3 տիեզերական ժողովներ է ընդունում Հայ. եկեղեցին թէ 7. ալնպիսի քարոզարքերից, որոնց մէջ քարոզուում է, թէ բարի նպատակով զոգովութիւն անելը մեղք չէ. ալնպիսի դասագրքերից, որոնց մի երեսում ասած է՝ ս. Ներսէս մեռաւ 374 թ.-ին և նորան լաջորդեց իւր որդին ս. Սահակ, միւս երեսում, թէ ս. Ներսէս 381 թ.-ին ներկայ էր Կ. Պոլսի ժողովում—կամ երբ միւր ձեռքի աւետարանի մէջ տպուած է «—և նա ոչ գիտէ»—վերջակէտ ու նոր պարբերութիւն, մենք էլ պարտաւոր ենք ձայներս բարձրացնել ալղտեղ ու լետոյ շունչ առնելով սկսել—«թէ երկիրն ինքնին բերէ և ալն»։ Սակայն չէ որ շատ հեռու կտանէ մեզ ալղ։

Սուսիկ սրբազանի առարկութիւններից կարելի էր եղբակացնել, թէ այն բոլոր դաւանական սկզբունքներն ու ծիսական կարգաւորութիւնները, որ «եկեղեցու լրութիւնն ընդունում ու քարոզում է», կանոնական կարգով և հաստատուն որոշումներով պարզաբանուած, ճշտուած ու չափի տակ են դրուած՝ ամբողջ հալ ժողովուրդի մէջ միակերպ ընդունուում և անչեղ պահուում են, և իւրաքանչիւր հալ մարդ կարող է նոցա բոլոր մանրամասնութիւններին ծանօթ լինել, պարտաւորուել ընդունելու և պահելու ամենապն ճշտութեամբ: Բայց ալղպէս է. կատարեալ նոյնութիւն կան արդեօք—հեռուն չը գնանք—Մ. Աթոռի և Վաղարշապատի եկեղեցւոյ՝ Վաղարշա-

պատիւ և Նրեանի եկեղեցիներն ժամակարգութեան մէջ. պահուած են արդեօք մի և նոյն եկեղեցւոյ մէջ ալն բոլոր կարգերը, որ կալին տասը, քսան տարի առաջ: Մեր իմանալով — ոչ, Յուսիկ սրբադան աւելի է տեսել ու աւելի կ'իմանայ, թէ որչափ մեծ է անորոշութիւնն ու բաղմադանութիւնը ալս կէտում, թէ որչափ դժուար է ուրեմն ցոյց տալ՝ ինչ է ընդունում և քարոզում եկեղեցւոյ լրութիւնը: Իսկ երբ հարկ լինի ալդ ցոյց տալ, պարզել որ և է խնդրում եկեղեցւոյ ուղիղ հայեցակէտը. երբ եկեղեցին հնար ունենալ բոլոր տալաձաշութիւնները վերացնելու և ընդհանուրի համար որոշ ու խակալէս պարտաւորեցուցիչ կարգեր դնելու՝ Բնչ էք կարծում, Բնչ սկզբունքի պէտք է հետեւ և Բնչ միջոցներ ձեռք առնէ: Պէտք է վերցնէ ան, ինչ որ ընդունուած է որ և է կենտրոնում, օր. Մ. Աթոռում, կամ որոշ տեսակ գրքերի մէջ, և առանց քննութեան, առանց ուղիղն ու սխալը որոշելու հաստատել. թէ կրկին անհատներն ձեռքով հինն ու նորը քննել պէտք է տալ և ուղիղը, հարադատն ու նախնականը ընտրէ: Ինչպէս են վարուել մեր նախնիք նման հանգամանքներում: Ինչպէս են վարուել նոյն իսկ ալն դէպքում, երբ մեր եկեղեցին իւր լրութեամբ վճի է բռնուել օտար եկեղեցիների հետ. կրկին անհատներ՝ մի մի Պետրոս, Մաթթաղայ, Ստեփաննոս Սիւնեցի, Վրթանէս Քերթոզ, Գրիգոր քորեպիսկոպոս, Սամուէլ Կամրջաձորեցի չեն եղել, որ հին ձեռագիրներ քրքրել, նախնական ու հարազատ աւանդութիւնը մէջտեղ են բերել, ու եկեղեցին իւր կնիքը դնելով վաւերացրել է: Սակայն ընդունենք որ եկեղեցին կարող է մի օր իւր լրութեամբ հանդէս գալ՝ աղգալին-եկեղեցական ժողով կազմել և մեզ դեռ անլալտ մի եղանակով որոշումներ անել. ինչպէս պէտք է վարուենք արդեօք մինչև ալդ օրը: Ինչպէս պէտք է վարուէինք օրինակ մենք ներկալ վիճելի խնդրում: Խնթադեւով նոյն իսկ, թէ ալս խնդիրը որ և է եկեղեցական — դաւանական նշանակութիւն ունի՝ չէ մենք ընթացել ենք ամենից օրինական ճանապարհով. այխատել ենք պարզաբանել մեր դիտողութիւններն ու հաստատել հիմնական փաստերով. ներկալացրել ենք ապա ի բարեհաւեցողութիւն եկեղեցւոյ դուրս ամենալն չալոց չալրապետի՝ և Նորին Վեհափառութեան չատուկ թուլտութեամբ հրատարակել չալրապետական աթոռով պաշտօնական ամսաթերթի մէջ — Եւ դիմացինն աւելի օրինական

ընթացք բռնած չի լինին անշուշտ, եթէ բաւականանալ հակառակ վճիռներ ու հրամաններ արձակելով. ալլ պէտքէ կամ նույնպիսի վաստերով հերքէ մեր ասածները, կամ ընդունէ և թող տալ որ անգիտակցաբար մտած սխալը գիտակցաբար ուղղուի:

Եւ միթէ իրօք Հալ. եկեղեցին որ և է մեծաւ կկրէ, եթէ այսպիսի սխալներ ալս ճանապարհով ուղղուին հետզհետէ: — Մենք լեղափոխութեան կողմնակից չենք և զիտենք որ ամէն ճշմարիտ բարեփոխութիւն՝ թէ ընդհանուր և թէ մասնաւորապէս եկեղեցական կեանքի մէջ, ժամանակ, համբերութիւն և երկարատե տոկուն աշխատանք է պահանջում: Ուստի ամենեւին չենք մտածում, թէ մի սրբազրութիւն անելուց լետոյ կարևոր կլինի զրիչը ձեռին ամէն տեղ մտնել ու սրբազրութիւններ անել: Կան հարկաւ փոփոխութիւններ, որոնք գիտակցաբար են եղել կամ իրենց պատմական և օրինական պատճառներն ունին: Կամ աշխարհներն ևս, որոնց պահելու համար մենք ներկայումս օրինական պատճառներ կունենանք. և ոչ մի հիմք չկալ, եթէ հնարաւոր իսկ լինէր, բոլորը մի անդամից լեղաշրջելու և նախնական դրութեանը դառնալու: Սակայն քնն խօսք, որ երբ հնարաւոր ու բանական է նախնականին դառնալ՝ ուղիղն ու ճշմարիտը, հարազատ քրիստոնէականն ու հարազատ հալկականը վերականգնել, մեր հոգու պարտքը պէտք է համարենք աշխատել դուրս համար: Ի՞նչ խօսք նաև, որ եթէ հետամուտ լինինք, եթէ կենդանի հետաքրքրութիւն ունենանք և իբրև մեռեալ տառ չնկատենք մեր եկեղեցական արարողութիւնները՝ ալժմէն իսկ ուղղելու և ճշտելու շատ բան կգտնենք: Մի օրինակ՝ աղանդաւորների ցանկը մեր ձեռնադրութեան մաշտոցի մէջ, ժամանակ է եղել, որ կարևոր են տեսել ճոխացնել ըստ կարելւոյն այդ ցանկը և, որչափ անուններ գտել են դաւանական գրածների մէջ, իբրև ալս կամ ալս ճշմարտութեան հակառակորդ լիշուած՝ աւելացրել են ցանկի վերալ: Բայց այժմ, երբ մենք միջոց ունինք ստուգելու, թէ ովքեր են այդ անուանց տէրերը՝ ամօթ է, որ շարունակենք նոյն աղանդաւորին դաւադան անունների ներքոց (Մանի, Մանիքեցի. Կումբրիկոս, Մոնտան, Պիպուզացի և այլն) բանադրել, կամ Քրիստոսից դարերով առաջ ապրած հեթանոս փիլիսոփաներին քրիստոնեալ աղանդաւոր համարել: Հարկաւոր է ուրեմն մաշտոցը նորից տպագրելիս ուշա-

դրութիւն դարձնել դորա վերայ և գէթ ակներև սխալներն ուղղել, Ը ս տ կ ա մ ս չի լինի հարկաւ ալդ, ալ ձեռնաս իշխանութեան բարեհալեցողութեամբ. բայց եկեղեցւոյ օգուտն է և անհրաժեշտ կարիքը, որ լինի:

Յամենալն դէպս մի անգամ նկատած սխալն իբրև ուղիղ ընդունել ոչ ոք պարտաւոր չէ. Շատ հանդամանքներ կան, որոնց մենք ի հարկին լարմարուում ենք. մաքուր ու զուտ ճշմարտութիւնը միշտ մեր զիմացը չի ելնում և գրեթէ ամէն քալափոխում մենք ստիպուած ենք աւետարանական սկզբունքը լինել, թէ ցորենն ու որոմը առժամանակ միտսին պէտք է աճեն. բայց դորանից չի հետևում, թէ կարելի է նաև որոմը ցորեն անուանել, Ընդունել ալն, ինչ որ չես ընդունում գիտակցութեանդ մէջ. և խոստովանել ալն, ինչ որ չես խոստովանում քո սրտում՝ նշանակում է ոչինչ չընդունել ու չխոստովանել, նշանակում է զուրկ լինել համոզմունքից ու մարդկային արժանապատուութիւնից, կամ տեղի տալ կամաւական բռնութեան: Իսկ համոզմունքն ու ներքին ազատութիւնը ամենաէական պայմաններն են կրօնական խնդիրներում: Ի՞նչ կրօնի ուսուցիչ կլինէինք մենք, եթէ ընդունակ լինէինք հակառակ մեր համոզման մի նախադասութիւն անգամ թելադրելու մեր աշակերտներին, եթէ ուրեմն ինքնեք համոզուած լինելով, որ պառաքեալն՝ սխալ է, պէտք է լինի պառաքեալսն, չբացատրէինք ալդ սխալը, և «պառաքեալն» իբրև ուղիղ ընթերցուած ներկայացնէինք: Հարկաւ մեր կողման դէմ դաւաճանած կլինէինք նաև ալն դէպքում, երբ հակառակ Հայ. եկեղեցւոյ դաւանութեան որ և է նախադասութիւն թելադրէինք. բայց փառք Աստուծոյ, ալդպիսի հակառակութեան մէջ երբէք չենք գտնուել ու չենք գտնուի Եկեղեցւոյ իսկական դաւանութիւնը՝ ալն «ինչ որ եկեղեցւոյ լրութիւնն ընդունում ու քարոզում է» շատ վօսմ է, շատ բարձր առօրեալ պատահականութիւններից, և մարդոց ստեղծած ամէն մի երկրորդական խնդիր նորա հետ խառնել մեծ անտեղութիւն: Իբրև Հայ. եկեղեցւոյ մի անդամն ու սպասաւորը մենք պարտաւոր ենք ընդունել և խոստովանել ալն, ինչ որ մեր եկեղեցւոյ լրութիւնն ընդունում ու քարոզում է», բայց ոչ երբէք իւրաքանչիւր պատահական տեսութիւն, որ եկեղեցւոյ մի ուրիշ անդամի կամ սպասաւորի հաճոյ կլինի որպէս եկեղեցւոյ լրութեան ընդունածն ու քարոզածը ընծայեցուցանել: